ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ
39 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի նախկին Ջրաշեն համայնքի իրավահաջորդը, և նախկին Ջրաշեն համայնքի սեփականություն համարվող գույքը օրենքի ուժով փոխանցվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին, հիմք ընդունելով այն հանգամանքը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 39 որոշմամբ «Ջրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին անհատույց տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող «New Holland B80B» էքսկավատորն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի, այդ թվում՝ համայնքի կազմում ընդգրկված Ջրաշեն բնակավայրի կարիքների համար՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 15-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող բեռնիչ անիվավոր էքսկավատոր New Holland B80B մակնիշի գյուղտեխնիկան «Ջրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին անհատույց տրամադրելու մասին» թիվ 39 որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարին առաջարկել սույն որոշման մասին իրազեկել «Ջրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին և ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքային սեփականություն հանդիսացող «New Holland B80B» էքսկավատորը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին վերադարձնելու ուղղությամբ: